ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ և հրապարակվում է “Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ Գնումների գործընթացի իրականացման կարգի համաձայն

Մրցույթի ծածկագիրը՝ “ԱՄՕ-ԻԼՄՁ-64/26”

“Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ-ի կարիքների համար ինքնաթիռների լցավորման մեքենայի ձեռքբերման անցկացվող “ԱՄՕ-ԻԼՄՁ-64/26” ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխությունը և նկարագրությունը՝

N 1 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 7. Հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը: Նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.

Կետ 1 -2՝ **նոր խմբագրություն:**

1. Առաջարկվող գինը ներկայացվում է “DAP” Երևան առաքման միջազգային պայմանով
2. Մասնակցի կողմից ներկայացված գինը չի կարող պակաս լինել ապրանքների ինքնարժեքից, որի հաշվարկը ներկայացվում է հանձնաժողովի պահանջով:

N 2 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 4. Հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը.

Կետ 1՝ նոր խմբագրություն.

1. Հայտերը բացվում են ԱՄՕ-ի հետևյալ հասցեում՝ Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, N3 վարչական շենքում գտնվող նիստերի դահլիճ՝ 2026թ.-ի մարտի 5-ին, ժամը 15:00-ին: Մասնակիցները Հայտերի բացման նիստին մասնակցելու համար պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով և լիազորությունները հավաստող փաստաթղթով: Միանձնյա գործադիր մարմնի (տնօրեն, գլխավոր տնօրեն և այլն) անձամբ մասնակցության դեպքում ներկայացվում է անձնագիր և պետական ռեգիստրի վկայականի համապատասխան ներդիրը, որով հավաստվում է տվյալ անձի միանձնյա գործադիր մարմին նշանակված

լինելու հանգամանքը, իսկ լիազորված անձի դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի կողմից պատշաճ կերպով տրված լիազորագիր:

N 3 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 5. Հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը. Կետ 1՝ նոր խմբագրություն.

1. Հայտերի փաստաթղթային տարբերակով ներկայացման վերջնաժամկետն է 2026թ.-ի մարտի 4-ը, ժամը 18:00-ն:

Փոփոխության հիմնավորում:

Համաձայն “Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ Գնումների գործընթացի իրականացման կարգի 5րդ գլխի 19 և 21 կետերի Հրավերում առկա որակավորման չափանիշների շտկում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել “ԱՄՕ-ԻԼՄՁ-64/26” ծածկագրով գնումները համակարգող Գ.Սարգսյանին:

Հեռախոս՝ +374 98 20 82 79:

Էլեկտրանային փոստ՝ gusargsyan@aia-zvartnots.aero

“ԱՄՕ-ԻԼՄՁ-64/26” ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: